Ուղղությունը. Տնտեսագիտություն, բակալավրիատ, առկա ուսուցում

Առարկա. Տնտեսական ուսմունքների պատմություն

<u>Անոտացիա</u>

Աշխատատարությունը՝ *4 կրեդիտ, 144 ակադեմիական ժամ*

Ստուգարք

Համառոտ նկարագրություն. Դասախոսությունների ժամանակ ենթադրվում է «Տնտեսական մտքի պատմություն» առարկայի ինտենսիվ ուսուցում, որպես անկախ տնտեսական գիտություն, որի բովանդակությունը բաղկածած է քաղաքական և տնտեսական պատմությունից, սկսաց անտիկ փիլիսոփաների տնտեսական մտքի գաղափարներից մինչև ժամանակակից տնտեսական դպրոցները: Այս դասընթացը պարունակում է տարբեր տնտեսական դպրոցների հիմնական տեսական դիրքերի համակապակցված նկարագրություն:

Առարկայի նպատակն ու խնդիրները.

Առարկայի նպատակն է տնտեսական զարգացման պատմական տարբեր ժամանակաշրջաններում, պայմաններում և երկրներում ձևավորված տնտեսագիտական ուսմունքների վերաբերյալ ուսանողներին մատուցել բազմակողմանի տեսական գիտելիքներ, և ձևավորել գործնականում դրանց կիրառման հմտություններ ու կարողություններ, որոնք բազա կհանդիսանան նաև տնտեսագիտական կիրառական առարկաների յուրացման և գիտելիքների ամրապնդման համար:

Առարկայի խնդիրներն են՝

Ուսումնասիրել և քննական մեկնաբանության ենթարկել՝

- «Տնտեսագիտական ուսմունքների պատմություն» դասընթացի առարկան, մեթոդաբանությունը, պարբերականացումը,
- Նախնադարյան-Համայնական հասարակարգի տնտեսական բնույթը, բնութագրիչները, առանձնահատկությունները,
- Հին Ասիայի և անտիկ աշխարհի տնտեսագիտական հայացքները և ուսմունքները,
- Միջնադարյան տնտեսագիտական ուսմունքները տարբեր երկրներում և Հայաստանում,
- Մերկանտիլիզմը՝ որպես տնտեսագիտության առաջին դպրոց և դրա դրսևորումը հայ իրականության մեջ,
- Դասական քաղաքատնտեսության դպրոցի տեսությունները և տնտեսագիտական ուսմունքները,

- Մարքսյան տնտեսագիտական ուսմունքը,
- Նոր դասական ուղղության տնտեսագիտական դպրոցները կարգավորվող շուկայական հարաբերությունների ժամանակաշրջանում,
- Տնտեսագիտական ուսմունքները կարգավորվող շուկայական հարաբերությունների ժամամակաշրջանում. քեյնսականությունը՝ որպես տնտեսագիտության նոր ուղղություն, հետքեյնսականություն,
- Դասական դպրոցի էվոլյուցիան,
- Տնտեսական աճի և տնտեսական ցիկլերի տեսությունների էվոլյուցիան,
- Իստիտուցիոնալիզմի տեսության հիմնական գծերը,
- Տնտեսագիտական միտքը Ռուսաստանում և Հայաստանում: Տնտեսագիտական հայացքների վերլուծությունը XIX դարի վերջին և XX դարի սկզբին,
- Տնտեսագիտական ժամանակակից ուսմունքների ձևավորման հիմքերը XX դարի վերջին և XXI դարասկզբին:

Սեմինար պարապմունքները բաղկացած են երկու մասերից՝ տեստավորում, որն ուղղված է առարկայի տեսական գիտելիքների ստուգմանը և տարբեր տիպի հանձնարարություններից, որոնց նպատակն է տալ ուսանողներին գործնական և հետազոտական հմտություններ:

Ուսանողներին կհատկացվի օգնություն նյութի ինքնուրույն ուսուցման հարցում, կանցկացվեն լրացուցիչ պարզաբանումներ դժվար հարցերի շուրջ անհատական կարգով: Անհատական աշխատանքների մեջ մտնում է հետազոտական գործունեություն, պրեզենտացիաների նախապատրաստում, աշխատանքներ խմբում և անալիտիկ նյութերի հետ ծանոթացում:

«Տնտեսական մտքի պատմություն» առարկայի ծրագիրը պարունակում է հիմնական տնտեսական տեսությունների պրակտիկ և տեսական վերլուծություն, որը նախատեսված է «Էկոնոմիկա» մասնագիտության (բակալավրիատ) II կուրսի ուսանողների ուսուցման համար:

Կապը ուսումնական պլանի այլ առարկաների հետ. Դասընթացը սերտորեն կապված է հետևյալ առարկաների հետ՝ «Քաղաքագիտություն», «Փիլիսոփայություն», «Տնտեսագիտության տեսություն», «Միկրոտնտեսագիտություն», «Մակրոտնտեսագիտություն», «Տնտեսության պետական կարգավորում»:

Ուսանողների գիտելիքների և հմտությունների սկզբնական մակարդակների նկատմամբ պահանջները. Առարկան ուսուցանելու համար ուսանողը պետք է իմանա տնտեսագիտության տեսության ընդհանուր հիմունքների, տնտեսական հիմնական հասկացությունների, երևույթների, օրենքների մասին, պատկերացում ունենա հասարակական զարգացման պատմական գործընթացի վերաբերյալ, կարողանա քննադատական վերաբերմունք ցուցաբերել մատուցված ուսումնական նյութի վերաբերյալ, կատարել առաջադրանքները, հանձնարարությունները, տիրապետի համակարգչային գիտելիքների, օտար լեզուների: Առարկայի յուրացման համար անհրաժեշտ բազա են հանդիսանում «Տնտեսագիտության տեսություն», «Փիլիսոփայություն» առարկաները: